



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ  
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

02 » հոկտեմբեր 2017 թվականի N: 111 ք.Գյումրի

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի N1031-Ն որոշման 6-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության կատարումն ապահովելու նպատակով.

**ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝**

1. «Գյումրու N23 հիմնական դպրոց» և «Գյումրու N42 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների միաձուլման պայմանագրի, փոխանցման ակտի կազմման և սեփականության իրավունքով «Գյումրու N23 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հանձնվող գույքի կազմի, արժեքի, հաշվառման և հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովի նախագահին՝ մեկամսյա ժամկետում իրականացնել «Գյումրու N23 հիմնական դպրոց» և «Գյումրու N42 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների միաձուլման պայմանագրի, փոխանցման ակտի կազմման և սեփականության իրավունքով «Գյումրու N23 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հանձնվող գույքի կազմի, արժեքի, հաշվառման և հանձնման-ընդունման աշխատանքները և ներկայացնել համապատասխան տեղեկատվություն:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հրայր Կարապետյանին:



Իսկականի հետ ճիշտ է

Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հավելված  
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի  
2017 թվականի հոկտեմբերի «02»-ի N 111 կարգադրության

Կ Ա Ձ Մ  
Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն

- Մակար Մելքոնյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ, նախագահ,
- Արմեն Դավթյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ, անդամ,
- Արտյոն Մանասյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ, անդամ,
- Աննա Հարությունյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N23 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար, անդամ,
- Մարիամ Մարտիրոսյան Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N23 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ, անդամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ  
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Խ. ՊՈՂՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

